

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱՅԵՐԵՆ ՆՆԱՏԻՊ ԳՐԻ ԶԵՆԱԳԻՐ ՆԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նայերեն հնարիպ գրքերից շարքերի հեղինակները, հրապարակիչները, թարգմանիչները կամ մեկենասները գրքերի էջերում, հիմնական բովանդակությանից բացի թողել են նաև տպագիր հիշարարարաններ: Դրանք բնագրեր են, որոնք պարունակում են հայերեն հնարիպ գրքի վերաբերյալ պարամական, լեզվական և այլ տվյալներ: Այդպիսի մի փոքր հիշարարարի հանդիպում ենք արդեն 1513թ. «Պարարագարարարում», որի 6-րդ մամուլի 7-րդ էջում առկա է հետևյալ հանրահայտ հիշարարարությունը. «Գրեցաւ ս[ուր]բ արառս ի ԶԿԲ ա[ստուա]ծապահ քաղաքս ի Վենիժ, որ է Վենետիկ Ֆռանկսարհան. ձեռամբ մեղապարար Յակոբին. ով որ կարդայք մեղաց թողութի[ւն] խնդրեցէք Ա[ստուծոյ] »:

1513 թ. մեկ ուրիշ գրքի՝ «Աղթարք»-ի վերջում հետևյալ փոքր հիշարարարությունն է. «Գիրքս բովանդակ ԻԴ- րերը է, և ամեն րերը Ը թու/ւր է»¹:

Ավելի ուշ՝ 1565 թ. Արգար Թոխաթեցու տպագրած «Տոմար» գրքի տպագիր հիշարարարանը ժամանակի խոսակցական լեզվի մի արարացույց է ներկայացնում. «Թվին ՌԺԴ շինեցօ նոր գիրս հայոց և այս խառնայ փնտուրս ի Վանարիկ ձեռամբ Թոխաթեցի Սաֆար Արգարին. այս գրչա/ւ/ այն է նոր գիրս վասն լուսնին. շար չի գրեցաք զի չէր մեկնիլ ի թու/ւրս»:

Նուարիպ գրքի տպագիր հիշարարարանները բնութագրելու և լեզվական տեսակետից քննելու առիթ ունեցել ենք²: Բերած առաջին երեք հիշարարարաններից անգամ նկատելի է, որ դրանք հայերենի վաղաշխարհարարյան շրջանի լեզվական հարագար բնագրեր են, որոնք լեզվի շրջանարարածանման կարևոր մի փուլում ի հայտ գալու շնորհիվ լեզվական ուսումնասիրման համար առանձնակի կարևորություն են ստանում:

Ասվածն ամբողջությամբ վերաբերում է նաև հնարիպ գրքի էջերին սփռված **ձեռագիր հիշարարարություններին**, այն ձեռագիր գրություններին ու պարամիկներին, որոնք թողել են մեր առաջին գրքերը սրացողները, գնողները, նվիրողները և այլ անձինք: Ներկա հոդվածը հնարիպ գրքի օրինակներում պահպանված ձեռագիր հիշարարարությունների քննության մի փորձ է: Որքան մեզ է հայտնի՝ առաջին փորձն է հայագիտության մեջ, և ուրեմն կարծում ենք քննական այդպիսի հայացքով էլ պետք է ընդունել այն:

1 Նույն հիշարարարությունը Գարեգին Զարեհանյանն այլ կերպ է ընթերցել՝ «Գիրքս բովանդակ ամենն րերը է: Եւ ամեն րերը ուխթ է». րեն Գ. **Զարեհանյան**, Նախկան մատենագիտութիւն, Վենետիկ, 1883, էջ 20:

2 Տե՛ս **Նորայր Պողոսյան**, 16-17-րդ դարերի հայերեն հնարիպ գրքի հիշարարարանների լեզուն. «Բանբեր Երևանի համալսարանի», 2011, թ. 133.2, էջ 22-31:

Նախ ասենք, որ հիշատակարան և հիշատակագրություն եզրույթները գործածում ենք հայագիտության մեջ վաղուց ընդունված իմաստներով: Նիշատակարանը (նաև հիշատակագրությունը) «ձեռագիրների և հին տպագրությունների վերջում արտագրողի կամ տպագրողի կողմից արված համառոտ գրությունն է, որ վերաբերում է գրության կամ տպագրության ժամանակին, տեղին, հանգամանքներին» (Ս. Մալխասեանց, Նայերեն բացատրական բառարան):

Նույնիսկ գրքի հիշատակարանները և ձեռագիր հիշատակագրություններն իրենց, եթե կարելի է ասել՝ ժանրային առումով չենք զարել ձեռագիր մատյանների հիշատակարաններից ու հիշատակագրություններից: Էական տարբերությունը միայն այն է, որ գրքերում **տպագրված** հիշատակարանների բովանդակությունն առնչվում է տվյալ գրքի տպագրման, հեղինակի անձի, ժամանակի և այլ հանգամանքներին, իսկ նույն գրքերի տարբեր էջերին տարբեր անձանց կողմից թողած **ձեռագիր** հիշատակագրությունները, ինչպես քննության ընթացքն էլ ցույց կտա, պարունակում են գիրքը գնելու, պահելու, նվիրելու և այլ հարակից՝ գրքի բուն բովանդակության հետ անմիջականորեն չկապված իրողությունների մասին:

Նույնիսկ գրքի ձեռագիր հիշատակագրությունները յուրաքանչյուր առանձին գրքի կենսագրության ուրույն վկայաբաններ են:

Եւ այսպես՝ ի՞նչ են ԺԶ-ԺԷ դարերում տպագրված հայերեն գրքերի էջերին թողած ձեռագիր հիշատակագրությունները, բովանդակային ինչպիսի՞ ուղղվածություն ունեն, լեզվական ի՞նչ որակ են ներկայացնում,՝ փորձենք պատասխանել այս հարցադրումներին:

Ձեռագիր հիշատակագրությունների տեսակներն ըստ բովանդակային ուղղվածության: Նախ ասենք, որ դիտարկել ենք մոտ 200 տարվա ժամանակաշրջան (1512-1712 թթ.) ընդգրկող տպագիր գրքերում հանդիպող ձեռագիր հիշատակագրությունները: Նշված տարեշրջանն իհարկե ընտրված է պայմանականորեն, սակայն կարող է պարկերացում տալ հիշատակագրությունների մասին, և հետո՝ դա համընկնում է միջին հայերենից վաղ աշխարհագրարի անցման մեր լեզվի շրջանին, ուստի լեզվի զարգացման տեսակետից մեծապես հետաքրքրական է:

Մենք դիտարկել ենք Երևանի Մաշտոցյան Մատենադարանում (ՄՄ), Ազգային գրադարանի հնարիսկ գրքի բաժնում (Ազգ. գրադ.), Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) և Երևանի պետական համալսարանի (ԵՊՏ) հնարիսկ և հազվագյուտ գրքերի բաժիններում պահվող՝ նշված ժամանակաշրջանում հրատարակված ընդհանուր հաշվով մոտ 40 գիրք: Ավելի սպույց՝ մոտ 40 գրքերում են մեզ պարահել ձեռագիր հիշատակագրություններ, իսկ շարունակաբար պարզապես գուրկ են նման գրավոր միջամտություններից:

Իրենց բովանդակային ուղղվածությամբ ձեռագիր հիշատակագրությունները կարելի է բաժանել հետևյալ մի քանի հիմնական տարատեսակների:

Ա) Նվիրատվությունների վերաբերյալ հիշատակագրություններ՝ եկեղեցուն, նրա սպասավորներին տրված ընծաների մասին: Նման ծանուցումներ գրառվում են այդ նվերները ստացողների կողմից, օրինակ՝ 1565-1566թթ. Վենետիկի Սաղմոսարանի ՄՄ 1317 օրինակից, էջ 52. «Ա[ստույն] ծ ողորմի Գոգե հոգուն, Գիլանին հոգուն, Ա ոչխար տվաւ»: Նույն գրքի մեկ այլ՝ 182-րդ էջին նույն ձեռագրով

գրված է. «Ա[սարուա]ծ ողորմի Կիրակոսին, Խոցայդեղին, ետուն Ա մոզի ավաց (՞)»: Մեկ ուրիշ էջին՝ «Ա[սարուա]ծ ողորմի Էրբխանոսին հոգուն, Ա մոզի ավաց»:

1676թ. Մաշտոցի ՄՄ 1931 օրինակի կազմի դարձերեսին գրված է՝ «Վեկիսանն որ գարդար ցորեն ավեց...»: Նույն գրքի էջ 9-ին՝ «Գաղդ րուա/ զօմէշ»:

1685թ. Վենետիկի Ավետարանի ԵՊՏ Ա-79 օրինակի վերջին ազար էջին մանր կանոնավոր ձեռագրով գրված է. «Յիշ[ալ]ր[ալ]կ է ս[ուր]բ Անտարանս Արարմնացի Սահակին, որ էառ իւր վասարակօք, եր ի դոռն Յայնկոյաներաց ր[ի]ր[ա]մ[ա]յր Ս[ուր]բ Ա[սարուա]ծածնին անջինջ յիշ[ալ]ր[ալ]կ...»:

Բ) Ուղղումներ քաղաքի գրքի այս կամ այն էջին, այս կամ այն փողի կողքին: Օրինակ. 1587թ. Վենետիկի Սաղմոսարանի (ՄՄ 1318) էջ 79-ին սև մեկանով գրողը ջնջել է գրքի շարվածքի «բ[ա]զ[ու]մ էին որ արարելէին ընդ իս ի բ[ա]րձ[ա]նց» փողը և դրա փոխարեն ավելացրել՝ «բ[ա]զում էին ոյք արելին գիս ի րարայարարաց» (Սաղմ. ԼԷ: 20): Նմանարիպ շարվածքներ կան նաև գրքի նույն օրինակի 200, 233, 234, 338 էջերին:

Ուղղումները խիստ քարքեր բովանդակություն ունեն: 1660-1661թթ. «Յիսուս Որդու» ԳԱԱ օրինակի էջ 378-ին սև մեկանով, ոչ վարժ ձեռագրով հեղինակը ուղղել է գրքի բնագրի մեկ բառը, որ թերևս այլ աղբյուրից է քաղել կամ անգիր է իմացել, քանի որ միայն ընթերցելով դժվար կլիներ նկատել բնագրային ոչ ակնառու այդ փոփոխությունը: Գրքում եղել է.

«Որպէս ասաց ինքըն նախկի / զնօղ ևս ամօղ մարմնոյն **յայտնի...**

Գրողը լուսանցքում ուղղել է.

«Որպէս ասաց ինքըն նախկի / Գնօղ ևս ամօղ մարմնոյն **յարին**»:

1698թ. Ամսերդամի Շարակնոցի Ազգ. գրադ. 1629 օրինակի էջ 265-ին գրիչը կանոնավոր նորագրով միջամարել է այսպես. «Ծագումնն միածնի Որդոյ քո յերկնից անըսկիզբն անեղ» հարվածը սև մեկանով ջնջված է և դրա վերևի մասում գրված. «Ծագեցեալն ի քէն միածնի Որդի քո, ո՛վ Նայր, անըսկիզն անեղ»:

Այս փոփոխության խիստ բոլոր մի օրինակ է Նովիանոս Կոստանդնուպոլսեցու «Նայելի ճշմարտութեան» (Վենետիկ, 1680) գրքի ԳԱԱ օրինակի 28-րդ էջին գրիչի կապարած խիստ միջամարությունը: Գրքի այն պարբերությանը կից, ուր գրված է՝ «...զգուշ լերուք յայնցանէ, ո՛վ հռոմայեցիք, որք գայլ իմն հաւար, բաց յայնման, զոր մեք քարոզեցաք ձեզ ուսուցանեն», անհա սրան կից ուղղահայաց փողով, սև, փոքր ձեռագրով գրված է. «Այ հայելի սրտիւն[ան], էս գրում աս չում խեղճածն ևս արունն ուրում աս...» (շարունակությունը կտրվել է թղթի հետ):

Գ) Աղոթքներ, բարեմաղթանքներ, ձոներ. 1565-1566թթ. Վենետիկի Սաղմոսարանի ՄՄ 1317 օրինակի էջ 319-ին, սև մեկանով ու վարժ ձեռագրով գրված է. «Խաղաղութեանց րուաղ -Բ[ր]իստոյս, գխաղաղութիւն[ն] և գերկնային ողորմութիւն[ն]ը պարգևեալ յարարածս քո մ[ա]րդ»:

Ներսես Շնորհալու 1643թ. Վենետիկում քաղաքով «Յիսուս Որդու» ՄՄ 121 թվահամար օրինակի ՇԻ էջին, սև մեկանով ձեռագիրը հավելել է. «Աստ քեզ գոչիմ աղերսալի, լեր բարեխօս Ս[ուր]բ Տիրուհի գերագարդ ևս ցնձալի, գերագոյի ևս բաղձալի, Աստուածածին ս[ուր]բ անարար, զքեզ աղաչեմ, կոյս Տիրամայր»:

1713թ. Նովհաննես Մրգուզի «Կրթութիւն հաւաքոյ» գրքի (Կ.Պոլիս) ԳԱԱ օրինակի էջ 1-7-ին երկար աղօթք է գրված հերեյալ սկիզբով. «Աղօթք եւ պաղապանք առ Ս[ուրբ] Խաչն ա[ստուա]ծընկալ. Աղաչեմ ք[ե]ր եւ անգանիմ յ[ա]ռ[ա]ջի սրբոյ նշանի քո, բարեխօսութեամբ սորա զպաղապրա]նս իմ ընկալ եւ զխնդրուածս իմ կարարեայ. եւ գօրութեամբ ս[ո]րա գօրացոյ զիս, ք[ե]ր, ի կոչումս, յոր կոչեցայ. եւ ի պատրիարան քո, զոր յուսա[յ]: Տուր ինձ զսա ի գօրութիւն] եւ ի ժողովա]լութիւն], յ[ա]ռողջութիւն] եւ ի զգասարութիւն]։ եւ պահապա[լ]ն անձին իմոյ...»: Այսպիսի բազմաթիվ այլ աղոթքների նույնպես կարելի է հանդիպել հնադարի գրքերի էջերին:

Դ) Անձանց, գրիչների հարազատների հիշատակում. Օրինակ՝ 1587թ. Վենետիկի Սաղմոսարանի (ՄՄ 1318) էջ 146-147. «Յիշարակ է Սաղմոսարանս Տ[ե]ր Վարդանին, իր կողայկից Ազիզին, իր որդոյն Ալեքսանտին, Սալմինազին. ամեն»: 1641թ. Նոր Զուղայի «Նարանց վարքի» (ԵՊՏ Ն-39) կազմի դարձերեսին. «Յիշեց[ե]ք եղկելի Նովհանես Աբեղայս Ա[ստուա]ծ է զձեզ յիշե ի մոռանգամ զալհարան իւրոյ. ամեն. եղիցի, եղիցի»:

Ներսես Շնորհալու 1643թ. Վենետիկում տպագրված «Յիսուս Որդու» ԳԱԱ օրինակի էջ 3Լ-ին սեւ կանոնավոր ձեռագրով գրված է. «Տ[ե]ր Յիսուս, բարի վայելումն տա քեզ Աղայեցի Ընթսրամի որդի յոյժ մեղսասէր քառալայե[ա]լ Ոսկանիս: Գր[ե]ց[ա]լ ՌՃԿԸ (=1719) թվին, նամսեանն մայիսի Ը»:

Մեկ այլ նմուշ. 1667թ. Ամսրերդամի «Վարդապետութիւն քրիստոնէական ըսք Նայոց» գրքի ԵՊՏ Վ-30 օրինակի 3-րդ էջին գրված է. «Յիշեցեք ի մաքրափայլ յ[ա]ղ[ո]թս ձեր զլի մեղօք զանարժան Գալուստ վարդալայե[ա]լին, ո՛վ հայեցող այսմ տերութիս, ողորմի ասես, որ եւ Ա[ստուա]ծ քեզ ողորմի աստ մարմնով, հանդերձե[ա]լն հոգով. ամեն: Թվ[ի]ն ՌՃԽԶ» (=1697):

Ե) Գիրքը գնելու, նվիրելու մասին հիշատակագրություններ. Ներսես Շնորհալու՝ 1643թ. Վենետիկում տպագրված «Յիսուս Որդու» ԳԱԱ օրինակի էջ ՆԲԱ եւ ՇԲ, նույն ձեռագրով երկու տարբեր հիշատակագրություններ կան. «Առն[ա]լ եղեւ Ըսրամբօլ ՌՃԿԸ (=1718) թվին մարտի մէկ ի վայելումն ---()», «Առն[ա]լ եղեւ ՌՃՆ (=1721) թվին եւ ապրիլի Ի ի վայելումն քառալայե[ա]լ Վիքային»:

1645 թ. Նոմմում տպագրված Կոնստանտինոպոլի «Քերական եւ տրամաբանական ներածութիւն» գրքի ՄՄ 206 օրինակի 444-րդ էջին գրված է. «Ես՝ Նամադանցի Էսկանդարի որդի Խաչատուրէս գնեցի քաղաքէս Բաղդադ, որ Բաբելոն գոչէ, թ[ի]ն ՌՃԿԶ, յունիսի Դ-ումն»:

1685թ. Վենետիկյան Ավետարանի Ազգ. գրադ 615 թվահամար օրինակի չհամարակալված (չհ.) էջ 433-ին շագանակագույն մեկնով, լավ ընթերցանելի գրված է. «Յիշարակ է ս[ուրբ] Անտարանս վանքեցի Պողոսին, Մարքարիսին, Աղամին, Միրզին եւ այլ իւր ննջեցեալոցն Ա[ստուա]ծ ողորմի, ք[ե]ր Նալիճորա եկեղեցին, Ա[ստուա]ծ իւրեաց հոգին յուսադի, արդարոց դասն դասեցէ. եւ անարժան ք[ե]ր Նազարէթս գրեցի...»

«Ի թվին ՌՃԶ (=1731) եւ՝ ք[ե]ր Դանիէլ վարդապետ քահալայե[ա]լ օրհնեցայ եւ զայս գիրքս առի ի մայրաքաղաքին Բիզանդիոյ ի վայելումն ինձ եւ իմայնոց...»,

գրում է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» (Լիվոռնո, 1698) ԳԱԱ 3222 օրինակի հիշարակագրողը:

Զ) Պապմական տարրեր փաստերի, իրադարձությունների հիշարակում, որ ժամանակին անշուշտ մեծ արձագանք են ստացել: 1673թ. Մարսելում տպագրված «Պարզաբանարի» Ազգ. գրադ. 228 գրքի էջ 67-ին սեռ մեղանով, պարզ ձեռագրով հիշարակագրված է. «Թվ[ին] ՌՃԻԴ (=1675) ի յունվարի ԻԷ: արքն կիրակի. նսրաւ Դախար սուլթան Մուսաֆայն» (հավանաբար պետք է լինի ՌՃԻԴ՝ Մուսաֆա Բ, 1695-1703թթ.):

Նովիաննես Կոստանդնուպոլսեցու «Պարզաբանութիւն հոգեւորագ Սաղմոսացն Դաւթի» (Վենետիկ, 1687թ.) գրքի ՄՄ 1589 թվահամար օրինակի 4-րդ էջին դժվարընթեռնելի փոքր ձեռագրով գրված է. «Ի ծընունդն Ստեփանոսին, որ է որդի Գրիգորին, ՌՃԴ(Դ)Գ (=1744) թվին եւ յունիսի Ժ եւ մէկին աւուրն հոգեւորաւ Բ շաբաթին ի ժամանակըս Դայրապետին Էջմիածնայ ս[ուրբ] Լթոռին սրբազան Դաւար Կաթողիկոսի: Ի թագաւորութեան Վելինամադին, որ մահ արաւ յերկիրս մինչեւ Գ տարին. Ա[ստուած] յերկ[ա]ր կեանքս պարթեւէ Վելինամադին --- նորածին մանգանն Ըստեփանոսին. ամէն»:

Դժվար է ասել, թե՛ ձեռագիր հիշարակարանների նշված տարաբնույթից որոնք են առավել շարժառիթ հանդիպում, քանի որ մեր քաղաքում հիշարակագրությունները լիարժեք չեն կարող լինել թեկուզ այն պատճառով, որ ձեռագիր հիշարակագրություններ պարունակող հնարիպ գրքի ոչ բոլոր օրինակներն են մեր ձեռքն ընկել: Իսկ մեր քաղաքում հիշարակագրություններում առաջին հայացքից գերակշռում է չորրորդ տարաբնույթը՝ այս կամ այն անձի, նրա հարազատների հիշարակություններն ու նրանց ուղղված բարեմաղթանքները:

Նասկանալի է, որ նշված տարաբնույթի սահմանները ընդհանուր առմամբ են պահպանվում: Շարժառիթ դրանք միախառն են ներկայանում: Միևնում գրության մեջ կարող է եւ՛ պապմական դեպք հիշարակվել, եւ՛ բարեմաղթանք հղվել այս կամ անձին, եւ՛ հեղինակին հիշելու խնդրանք պարունակել եւ այլն: Օրինակ՝ Ներսես Շնորհալու Վենետիկյան 1660թ. «Յիսուս Որդու» ԳԱԱ օրինակի փորձաթերթին կիսավարժ ձեռագրով գրիչը գրել է գիրքը գնելու մասին, ապա իր ծնողներին հիշելու խնդրանք է ուղղել ընթերցողին. «Ես՝ մեղ ասոր եւ անարժան ծառայ Ա[ստուած] այս գիրքն որ առի Վելթըցի Մարկոսէն այս Յիսուս Որդիս հալալ վաստակոց իմոց. ամէն: Դարձեալ եթէ որ հանդիպեսցի այս գրքիս յետ իմոյ վաղձանին, եթէ գնեսցէ կամ յիշարակ տայցեն, միով Նայր մեղայի յիշեցէք ըզմեզս իմ եւ զիս, ո որ յիշեսցէ ի ահեղ արեւին ի յանաչառ դարաստան Ա[ստուած] իր ողորմեսցի. ամէն: Թվականին ՌՃԶԷ-ին, ի գիւղն Վելթի»:

Նույն «Յիսուս Որդու» ԳԱԱ օրինակի էջ 331-ին մեկ այլ ուշագրավ հիշարակագրություն կա. նույն ձեռագրով գրիչը թողել է իր ժամանակին գրքի գնի մասին մի փոքր հիշարակ. «Այս է պատճառ գրոյս որ ես՝ փրագու Մելքոնս առի Վելթըցի ար[եւ] Մարկոսէն մի Յիսուս Որդի, այս է որ վերոյ գրեալ է **գինն Դ շահի**, թվին ՌՃԶԷ-ին (=1738), սեպտեմբ(ե)րի ԺԸ-ին»: Եթե գրողը նշում է, որ մեկ «Յիսուս Որ-

դի» է գնել, կարելի է ենթադրել, որ վաճառքում այդ գրքերից էլի են եղել, այսինքն՝ իր ժամանակին հայերեն հնարիպ գրքի շուկա է ձևավորված եղել, իսկ փարաժող-ները նախ և առաջ Եւրոպայից Ասիա ճամփորդող առևտրականներն են եղել, և փալագրված հայերեն գրքերը շար արագ կարողացել են սփռվել աշխարհով մեկ և հասնել հնարավոր սպառողին: Ննարիպ գրքի ձեռագիր հիշարակագրությունները նաև նման եզրահանգումների փաստեր են մատուցում:

Մեր ներկայացրած հիշարակագրությունների բոլոր փարապեսակներն ի վերջո հանգում են երկու հիմնական խմբի: Առաջին խմբում այնպիսիք են, որոնք գրողի վերաբերմունքն են արտահայտում գրքի այս կամ էջի, հատվածի, քողի վերաբերյալ, օրինակ՝ «Նասր ու Բարակն է մեկ գին՝ // Վայ կայ Բարակ մանողին», «Շար Բար է աս գիրքս»: Երկրորդ խմբում քվյալ հնարիպ գրքի բովանդակության հետ չկապվող հիշարակագրություններն են՝ նվիրատվության, գնելու, հեղինակին կամ հարազատներին հիշելու վերաբերյալ կամ պարմական կարեւոր փաստեր, աղոթքներ, մաղթանքներ և այլն:

Ննարիպ գրքի պահպանված և մեր օրերը հասած հարյուրավոր օրինակներում ձեռագիր հիշարակագրություններ շար ավելի շար կարելի է գտնել: Օրինակ՝ ՄՄ-ում պահվում է 1512-1800 թթ. փալագրված գրքերի 2315 օրինակ, որոնցից շար շարերը ձեռագիր հիշարակներ են կրում, ինչպես՝ թիվ 773, 792, 891, 907, 1461, 1486, 1860 գրքերը և այլն, և այլն: Միայն 1666թ. Ոսկանյան Ասրուածաշնչի՝ ՄՄ-ում պահպանված 16 օրինակներից ձեռագիր գրություններ ունեն 10-ը (թիվ 306, 900, 901, 902, 904, 906, 907, 910, 1850, 2102): Դրանք բոլորը լրացուցիչ դիտարկման, ապա և քննության մեջ ներառելու կարիք ունեն: Բայց դա, կարծում ենք, խիստ աշխատատար ջանք և փորձերի աշխատանք է պահանջում, գուցե՝ դուրս է մեկ անհատի հնարավորությունից: Իսկ այն, ինչ այսօր ներկայացնում ենք ձեռագիր հիշարակագրություններից, կարծում ենք դրանք էլ կարող են բավարար պարկերացում փալ այս «ժանրի» մասին:

Ձեռագիր հիշարակագրությունների լեզվական նկարագիրը. Ինչպես նշեցինք, ձեռագիր հիշարակագրությունները խիստ կարեւոր նյութ են մատուցում հարկապես հայերենի վաղ աշխարհագրության շրջանն ուսումնասիրելու համար: Ներաբրքի է դիտարկել, թե ընդհանուր առմամբ «ռամկախառն գրաբար» (Ղեւոնդ Նովնանյանի բնորոշումն է վաղ աշխարհագրի համար) այս փեքսերում բուն գրաբարից ինչ շեղումներ ու փարբերություններ են հանդիպում: Քննությունն առաջ ենք փանում հայերեն ձեռագիր մարյանների հիշարակարանների Ձեւորգ Ձահուկյանի քննության սկզբունքով՝ առանձնացնելով հնչյունական, ձեւաբանական և այլ շեղումներ³: Լեզվական փաստերի մասին խոսելիս այսօր կներկայացնենք միայն սրույց ընթերցված բառերն ու ձեւերը:

Նայերենի վաղաշխարհագրության շրջանի առանձնահարկություններից մեկն է այն, որ միաժամանակ գործածվում էին գրաբար, աշխարհագր և բարբառային փեքսեր: Այդպիսի փարբեր հանդիպում են նաև մեր այս հիշարակագրություն-

3 Տե՛ս Գ. Ձահուկյան, Բարբառային երեսները հայկական հիշարակարաններում, Եր., 1997:

ներում: Այսպեղ առկա է նաև կանոնավոր գրաբար շերտը, որ թե՛ քերականական առանձնահատկություններով էլ թե՛ ժանրային կառուցվածքով ու սրանդարը ձևերով շար նման է ձեռագիր մատյանների հիշարակարաններին ու նաև վիմագրերին, ինչպես՝ «*օվ ոք ծախե կամ գողանայ՝ ԳՃ էլ ԺԸ հայրապետացն նգովեալ լինի էլ մեր մեղացն պարտական լիցի. ամեն*» (**Ոսկան Երեսանցի**, Քերականություն, 1666, Ամստերդամ ՄՄ 902 թվահամար օրինակ), «*Ի թվին ՌՃՁ (=1731) ես՝ Կեր Դանիել վարդապետ քահանայ օրհնեցայ էլ գայս գիրքս առի ի մայրաքաղաքին Բիզանդիոյ ի վայելումն ինձ էլ իմայնոց..*» (**Երեմիա Մեղրեցի**, Բառգիրք հայոց, 1698, Լիվոռնո, ըստ ԳԱԱ օրինակի) էլ այլն: Է՛լ ավելի հիշարակագրություններում սփռված են գրաբարից փաթեթավոր ձևեր ու հնչյունական փաթեթակներ, ինչպես ստորև բերվող փաստերն են:

ա) Ուղղագրական շեղումներ: Հիշարակագրությունների հեղինակների՝ գրագիրությանը փիրապարելու աստիճանին համապարասխան այս փաթեթերի մեջ են մտնում ուղղագրական մի շարք շեղումներ, որոնք կարելի է հետևյալ կերպ բնութագրել:

Նախ՝ մեծ խումբ են կազմում ուղղագրական սխալագրությունները, որոնք խոսակցական ակունք չունեն էլ գալիս են զուր գրիչի իմացությունից, ինչպես՝ յիշէւք, գրէցի, Պողոս, պարգևեայ, գրեցավ, նվաստ, մեղաոր, թագաոր, հողմաին, փղաոց, վաղճան, հավան, պաշտոն, մանավանդ, կենոք, գլխովս, անսէքմ, պարուն, իմաստութիւն, թագավորութեան էլ այլն:

Ուղղագրական շեղումներ, որոնցում նկատելի է խոսակցական, բարբառային շեշտադրությունը, ինչպես՝ գգուշ, գուղ, ապրիւլ, մուսանգամ, հրնչոց (=ընչից), հաբեղան, գալեսարան, էրէկ, քրհանային, յունրվար, արդունաորութեան, *Խէրիքնագ*, *Լայրապետ*, վարդապետ էլ այլն:

Բաղաձայնական փոխառություններով պայմանավորված ուղղագրական շեղումներ, ինչպես օրինակ ձայնեղացում՝ ցնձալի, *դախար*, *Բարիգ*, *Բավըլ*, ընդունուկ, բարեքաշք, *գ(=կ)ոչէ*, *հոգրեմբեր*, *յանկարծագի*, *մանգանն*, *մարդի* (մարտի) էլ այլն, խլացում կամ շնչեղ խլացում՝ քաղալէս, բշապիւրէ, բախտասանաց, յարգանք, պինք, փրուք, Մարքար, օթախառն էլ այլն:

Բ) Հոլովական էլ խոնարհման համակարգերի շեղումներ: Գրաբարից փաթեթավոր, նոր լեզուն ներկայացնող ձևաբանական փաստերը սպասված ակտիվությունը չունեն մեր այս հիշարակագրություններում: Ներաբրքիւր է, որ նույն բանն է վկայում է նաև Գ. Ջահուկյանը ձեռագիր մատյանների հիշարակարանների բարբառային փաթեթը քննելիս⁴: Դրա պարզառությունից մեկն անշուշտ այն է, որ հիշարակագրությունների հեղինակները հետևել են ընդունված սրանդարը ձևերին ու կաղապարներին էլ իրենց խոսվածքը գործածելու մեծ ազատություն, այնուամենայնիվ, իրենց չեն վերապահել:

Մեր բնագրերում հանդիպող աշխարհաբարյան կամ բարբառային ձևերից են՝ հոգուն, կողակցուն, գառաքելու, փարու, որդոյն, որդոն, ծովո, իրեաց, փվաւ, փվաց

4 Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 8-9:

(=սովեց), կու զանազանէ, կը պարկանի, օգնէյ, էկիմք, գրիմ, նորոգեցիմ, գրում աս, ուրում աս, քօնցէլ իր եւ այլն: Սպասված առարկությունը չունեն նաեւ զուր բարբառային բառերը՝ մոզի, դարի(ք), քալանդ, դօսար, մղարեսի, խօշ-խօշ եւ այլն:

Առանձին դիտարկման կարիք ունի հարուկ անունների գործածությունը, որոնցում հանդիպում են քիչ փարաված անձնանուններ՝ Գոգէ, Գիլան, Խոցայդեղ, Էրբիանոս, Բոլորմսեհ, Էսկանդար, Սալմինազ եւ այլն, արեղանունների փառադարձման նոր ձևեր՝ Ըսարամբօլ, Կարնի (= Կարին), Բայրելուն, Բարէլօն, Թարբէզ եւ այլն:

Մեծ փարածում ունի բառամիջի համը -յ- գրությունը՝ փարայպարպուց, համայդանեցի, կողայկից, Խոցայդեղ, Բայրելուն, Բաղդայար (՝), պարպայկան, Առաքեայլ, արեայն մերձաւորսն, յաւիտեայնա, նընջեցելոյց եւ այլն:

Գ) Շարահյուսական ակնհայտ աշխարհաբարբայն կառույցների նույնպէս շար կարելի է հանդիպել.

Աստուած է (=էլ) զձեզ յիշէ, ա՛յ խեղճ մոլորեալ Մելքոն, այս Շարականը կը պարկանի, Նարաւ յախար սուլթան Մուսաֆայն, քնով էկիմք Նաշարախան, բարի ա յոյժ, կացէք բարօժ, քննունք ձեզ հեւր, մին բերան յիշէ, յոն ուրբաթ եղեր եւ այլն:

Երևմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ի (1698թ.) ԳԱԱ օրինակի կազմի դարձերեսի հետևյալ հիշարակագրությունը շար բանով հիշեցնում է Արարաբյան բարբառը. «Սուրբ Էջմիածնայ գիւղի անունն Վարդգէս է, Վաղարշ Արշակունին մեծացրել է եւ իւր անունն դրել: ՌՃՁ մարտի Ը, Մաղաքիա վարդապետ արթոռակալ»։ Այս փոքր հարվածն իսկ ցույց է տալիս, որ ԺԹ դարի կեսերից մեզ հայրնի՝ Արարաբյան բարբառի հիմքի վրա նոր ձևավորվող գրական արեւելահայերենի նախնական փարբերակն իրականում գործածվել ու նաեւ գրվել է շար ավելի վաղ՝ ԺԸ դարի սկզբներին:

Կղեմէս Գալանոսի 1645թ. «Քերական եւ քրամարանական ներածութիւն» գրքի ՄՄ 206 օրինակի էջ 444-ին պահպանված հետևյալ հարվածը ժամանակի բարբառային հետաքրքիր մի նմուշ է. «Ա[ստուա]ծ գօրութիւն արայ Գ[ա]լու Ա[յ]մէս եւ փառապալ իմ յիշկիրն Բարելոյն ալ ազնայ ինձ եւ փրկայ զիս փորձութենէ. Յովանէս»։ Նեղիմանկն այսպէս փորձել է իր փեքսպը ձեռել գրաբարի վրա (զիս, փորձութենէ), սակայն գրաբարին վար փիրապետելու պարճառով հիշարակագրությունն սրացվել է բարբառային ձևերի մի խառնուրդ, ուր առկա են այլ>ալ, օ>ա հնչյունական անցումները, ձայնավորի երկբարբառացում՝ ե>իէ (յիշկիրն), բայի հրամայականի բարբառային ձևեր՝ արայ, փրկայ, ազնայ եւ այլն:

Կարծում ենք՝ հիշարակագրություններում բարբառային փարբերի հետագա ուսումնասիրման ժամանակ, բարբառային փաստերի սովորաբար գուցա հեռ, հնարավոր կլինի նաեւ դրանց որակական կողմի մասին դատողություններ անել եւ այդ ճանապարհով փորձել ցույց տալ, թե 300 փարի առաջ բարբառներն ինչ աստիճանի փարբերություններ ունեին ներկայիս վիճակից:

Բոլոր դեպքերում ԺԶ-ԺԷ դարերի հայերեն լեզվավիճակը ներկայացնող այս բնագրերի քննությունը լրացուցիչ անգամ գալիս է ապացուցելու, որ վաղ աշխար-

հաբարն արտահայտված էր հնչյունական, ձևաբանական անմիօրինակությամբ ու բարբառային տարրերի՝ դեռևս արեւմտահայերեն կամ արեւելահայերեն լեզվական որակների չվերափոխված մի վիճակով, եւ որ գրաբար, խոսակցական կամ բարբառային տեքստերը գրվում ու գոյատևում էին կողք-կողքի:

Ձեռագիր հիշարակագրությունների նմուշներ: Ննապիպ գրքի ձեռագիր հիշարակագրությունների ոչ ընդարձակ մեր այս քննության վերջում ներկայացնենք հնապիպ գրքերից քաղված հիշարակագրությունների մի քանի բնորոշ նմուշներ: Դրանք կարող են ուղենիշ լինել ձեռագիր հիշարակագրությունների հնարագա հավաքման եւ ամբողջական հրատարակության համար: Բերվող հիշարակագրությունները պայմանականորեն համարակալել ենք:

-1-

Կղեմես Գալանոս, Քերական եւ տրամաբանական ներածություն, 1645թ., Տոմ, 444 էջ: Ուրանավոր Հիշարակագրություն ՄՄ 206 թվահամար օրինակից, փիրդոսաթերթի դարձերեսին, սեւ մելան, կանոնավոր ձեռագիր.

Մեղօք աշխար[ի]ս շաղախեալ
Մեկքն գրիչս ունայնացեալ
Ի քաղաքն իմ Կարնի կոչեալ
Ի Բաբելոն պանդխտացեալ
Ի յօթն ամեայ այս չափ կեցեալ
Թարեզ ք[ա]ղաքան եկե[ա]լ հասեալ:
Ի վայելումն Մեկքնին
Ընծայեցի Սողոմոնին
Յ[ի]սու[ս] փացե շնոր[ի]ք կարգին
Ընթեռնելով գրոց բանալին:
Ով որ իմաստութե[ան] ցանկա[յ]
Եւ ս[ուր]բ գրոց տեղեկանա[յ]
Եւ իմաստնոց դրունս գնա[յ]
Խոնարհութ[ի]ւնն արեւստ արա:
Եթէ խոնարհութ[ի]ւնն ունիս,
Նամբակագունից յոյժ գովիս:
Եթէ խոնարհութ[ի]ւնն չունիս՝
Նասարակաց ոչ ինչ կոչիս:

-2-

«Վարդապետություն Քրիստոնեական ըստ Նայոց» (հայ. եւ լատին. լեզ.), 1667, 72 էջ: Հիշարակագրություն ըստ ՄՄ 1093 գրքի Ա. փիրդոսաթերթին հաջորդող չհամարակալված (չհ.) 1-ին ազատ էջին, սեւ մելան.

«Նաւարամբ գմինն յերից անձանց զբանն Ա[ստուա]ծ ծնեալ ի Տօրէ նախքան գլախբեան ի ժամանակի իջեալ յարգան[ի] Ա[ստուա]ծածնի Մարիամ կուսին իննամսեայ ժովկալեալ յարգան[ի] այնմ կուսին եւ եղև Ա[ստուա]ծն կ[ա]լա[ր]ա[ր]եալ լ մարդ կ[ա]լա[ր]ա[ր]եալ հոգով եւ մարօք եւ մարմնով մի անձ եւ մի դէմ միատրեալ

մի բնութիւն. Ա[սարուա]ծն մարդացեալ առանց փոփոխման, առանց այլայլութեան[ան] անսէրմ յղութիւն եւ անապական ծնունդ, ո[ր]պ[էս] ոչ է սկիզբն Ա[սարուա]ծ, թէ նորա եւ ոչ վախճան մարդկութեան[ան] նորա, զի Յիսուս Բ[րիսարո]ս Հրէկ եւ այսօր նոյն եւ յաւիտեան»:

-3-

Նիշարակագրությունն նույն գրքի՝ ԵԴՆ Վ-30 օրինակից, էջ չի. 3, սեւ կանոնավոր ձևազիր.

«Յիշեցէք ի մաքրափայլ յ[ա]ղ[օ]թս ձեր զլի մեղօք զանարժան Գալուստ վ[ա]րդ[ա]յ[ա]ն[ի]ւրն, ո՛վ հայեցող այսմ Կրօնիս, ողորմի ասես որ եւ Ա[սարուա]ծ քեզ ողորմի ասար մարմնով հանդերձե[ա]յն հոգով. ամեն: Թ-վ[ի]ն Ռ-ՃԽԶ» (=1697):

-4-

Մաշտոց, 1667, Ամստերդամ, 315 էջ: Աղոթք ըստ ՄՄ 1162 գրքի, վերջին՝ չի. ազար էջին, սեւ մեկան.

«Գլխովս մեղուցեալ եմ հպարտանալով, բարձրայօն լինելով, մարդոյ վ[երա]յ շարժեալով, հաշ/ան չկենալով եւ խոնարհ չպահելով, ս[ր]բութեան երկրպագելով, աջօքս արար հայելով, արարատք չթափելով, զիրք չհայելով, կնոջ անասնոց խառնակութիւն[ն] փեսանելով ցանկանալով, ականջովս չարին ունկն դնելով, բաժնաւորաց դարարկութեամբ դարողութեամբ, հին եւ նոր Կրակարանաց ունկն չդնելով, չարին դնելով, հոյսովս մեղաց հոյս ունելով... բերանօքս քաղցր կերակրի ուրելով, սուր ասելով, զուր ասելով, հայեցելով, ազահ ուրելով, բամբասելով, դարելով, դարարկ խօսելով, ազահ խմելով, շար խօսելով, զիրք սղալ կարդալով, շաղբաղպելով, յիշունց եւ բուֆր ածելով, ծայրարելով, գրոց համ չառնելով, լեզուս սուր երկսայրի առնելով, մարդոյ սիրտ խոցելով, փրջելով (՝)»:

-5-

Նոր Կրակարան, 1668, Ամստերդամ, 934 էջ: Նիշարակագրությունն ըստ ՄՄ 961 օրինակի, գրքի վերջում ազար էջին սեւ մեկանով գրություն.

«Թիվն 1760 յունիսի 2 ումն իբր փասն եւ մին ատուր ժամուն արեգակն խաւարեցաւ իբրեւ ամենակարողն յամ[ենայն] չարեաց եւ փորձանաց եւ յամ[ենայն] պարտուհասից գոր գոյ է ի վերայ մեր վ[ա]սն մեղաց մերոց փրկեալ ազարեացէ. ամեն: Իբր փրուպ չնչին ծ[ա]ռ[ա]յ Գասպար պողէ (՝)»:

-6-

Ժամագիրք, 1673, 424 էջ: Նիշարակագրությունն ՄՄ 1225 օրինակի վերջին ազար թերթին.

«Եւս խընդրեմ յիշեցիք Թիպղիզեցի գառաֆ պրն Ամիրի որդի պրն Առաքեալն եւ զիւր արեալն մերձաւորսն, յամ[ենայն] յիշողք սոցին յիշեալ լիջիք առաջի անմահ գառի Ա[սարու]ծն անգրաւ յաւիտեալնս. ամեն: Ա[սարու]ծ ողորմեսցի բարի յիշարակ դնողաց միշտ. ամեն»:

-7-

«Արեւստի համարողութեան» (աշխարհաբար) 1675, Մարսել, 151 փոքրադիր էջ: Նիշարակագրությունն ըստ ՄՄ 2066-ի, էջ 149, սեւ մեկան, նուրբգիր. «Յիշ[ա]

տր[ա]կ է գիրքը Տեղեցի Գաբրիել վ[ա]րդապետին և ծնողացն Աղամին, Ղարիպին, եղբորն Էդիբարին: Աղաչեմք հանդիպողացո յիշեցիք զհող և զմոխիր ուրից մերոց և ասասցիք Ա[ստուած] ողորմի հոգոց նոցին և դուք օրհնեալ լինիք յԱ[ստուած]յ: Թվ[ին] ՌՃՆ մէկ (=1722): Ողջ լերուք ի Ք[րիստո]ս Յ[իսու]ս, կացէք բարով»:

-8-

Անկարան, 1685, մայիս 14, Վենետիկ, 450 էջ: Նիշարակագրություններ ԵՊՏ Ա-79 հնարիպ գրքից: Էջ 202, Մարկոսի Ավերարանի ավարտին, սեւ մեկան, մանր կանոնավոր ձեռագիր:

«Յիշարակ է ս[ուրբ] Անկարանս Արքամետրացի Սահակին և իւր կողակից Մարթային և ըզհանգուցեալ դուստր Փերուզին և այլ իւր նընջեցեղոց հոգուն, եղաւ այս ս[ուրբ] Աշկարանս այն Կոստանաց ս[ուրբ] Ա[ստուած]ածին յիշարակ, ո՛վ ա[ստուած] ծայսէր քահանայք, յորժամ ընդեմու/ կամ հարեանցի ըզպեսանէք, ասացէք Ք[րիստո]ս Ա[ստուած] որ ի անճառելի շնորհիւն լուսաւորել --- հաւասար Արքամետրացի Սահակին. ամէն»:

-9-

Նույն ԵՊՏ Ա-79 օրինակի վերջին չի. ազար էջին, նույն մանր ձեռագիրը. «Յիշ[ա] տր[ա]կ է ս[ուրբ] Անկարանս Արքամետրացի Սահակին, որ էառ իւր վաստակօք, եւ ի դուռն Յայնկոյսներաց տ[ի]ր[ա]մ[ա]յր Ս[ուրբ] Ա[ստուած]ածին անջինջ յիշ[ա]տր[ա]կ: Արդ՝ ո՛վ լոյսերամ դասք քահանայից և խումբք սարկ[ա]ւա[զ]ա[յ]ց, ի վայելելն ձեր զայս ծաղկափոխք բուրասարանս, յիշել[ե]ք ի մաք[ուր] մա/թանս ձեր բարեմիւր և ա[ստուած]ածաւր Սահակին, կ[ո]ղ[ա]կից Մարթային և դուստր Փերուզային և ամ[ե]նայն արեւակցացն յիշեցէք և Ա[ստուած] ողորմի ասացէք և ս[ո]ղ[ա] յիշ[ո]ղ[ա]ցն Տ[է]ր ողորմեսցի իւր միսանգամ զալստեանն և յաւորն ահեղին. ամէն»:

-10-

Ժամագիրք, 1699, Կ. Պոլիս: Նիշարակագրություն ըստ Ազգ. գրադ. 1893 օրինակի: Գրքի պակասող 425-426 թերթը վերականգնված է արագրությամբ, էջ 425-ի առաջին սյունակի վերջում սեւ մեկան, կանոնավոր նուրբգիր:

«Ես՝ անարժան, անպիտան տ[ի]ր[ա]յցու Ահարօնի որդի Կարապետս զպակասս Ձայնքաղ շարականին գրիմ և զբայբայեալն նորոգեցիմ թվ[ին] ՌՄԼԹ-ին (=1790), յուլիսի ԻԸ-ին»:

-11-

Մաշտոց, 1704, Կ. Պոլիս, 642 էջ: ԳԱԱ օրինակի էջ 638-ին հաջորդող չի. ազար էջին, սեւ կանոնավոր մեկան, ամբողջ էջով մեկ:

«Յիշացողն ամ[ե]նայնի յիշացէք ի Ք[րիստո]ս և Ա[ստուած] ողորմի ասացէք բարեմիւր և ա[ստուած]այսէր մահոսի Մալխասին, ծնողացն՝ հօրն Նարութենին, մօրն՝ Եղիսին, կողակից Ըռեհանին, որդոյն Սարուխանին, կ[ո]ղ[ա]կից Ալթունին, եղբարց մ[ա]լիղսի Սահակին, այլ ամ[ե]նայն արու արեան մերձաւորաց իւրոց կենդանեաց և հանգուցեղոցն. ամէն»:

Դ[ա]րձ[եա]լ կրկին անգամ յիշացէք ի Ք[րիստո]ս և Ա[ստուած] ողորմի ասէք բարեմիւր և ա[ստուած]այսէր մահոսի Մալխասին և կ[ո]ղակից Ըռեհանին,

գոր ըստացաւ ի յալալ հընչոց եւ յալալ վաստակոց զայս Մաշտոցս, եւ վերստին նորոգել եւ կազմել յիշատակ իւր եւ ծնողաց, ի վայելումն ք[է]ր Մարգարին անջինջ յիշատակ:

Դ[ա]րձ[եա]լ եւս յիշացէք ի Ք[րիստոս]ս եւ Ա[ստուա]ծ ողորմի ասէք Թուրվանդին, որ բազում աշխատ արար այս գրգիս, կազմեցաւ ձեռամբ սուր անուն բարեկցի (Պ) ք[է]ր Սահակին, թվին ՌՄՁ (=1757) ամին»:

-12-

1685թ. Վենետիկի Ավետարանի ՄՄ 960 թվահամար օրինակը պարունակում է մի շարք հիշատակագրություններ: Կազմին հաջորդող չհ. ազատ էջին, սև մեկան, կանոնավոր գրություն.

«Յիշատակ է ս[ուր]բ Անտարանս ք[է]ր ղազար քչիանային, հայր Վիրապին, մայր Եթարին, կողակից Եղսումի որդի Ղահրամանին, Քալաշին դուստր Եթարին, Սալաբինին, թվին ՌՄԽ-ին (=1791), մարտի Գ-ին: Գրվեցաւ ի գոռն Բլուր: Թվին ՌՄԻԸ-ին Էլիչն պարոն քարաւ քաղաքն»:

-13-

Նույն ՄՄ 960 օրինակի Կազմին հաջորդող չհ. ազատ էջին, վարը, այլ ձեռագրով. «Թվի ՌՄԿԴ-ին (=1815) եւ ք[է]ր Գրիգորս ձեռնայորեցայ, գոր եւ Տ[է]ր Ա[ստուա]ծ վայելումն քացէ»:

-14-

Նույն օրինակի էջ 1, խոշոր տառերով. «Յ[իստ]ի Ք[րիստոս]ի ծ[ա]ռ[այ] ք[է]ր Արութին»:

-15-

Նույն օրինակի էջ չհ. 121, Մարթեոսի Ավետարանից հետո ազատ էջին, սև մեկան, այլ ձեռագիր. «Թվին ՌՄԿԴ-ին (=1815) առնուաւ ս[ուր]բ Ավետարանս. յիշատակ է Սանդիպի հոգոյն եւ իւր Դ որդոյն, եւ որ այս Անտարանս կարդայ՝ ասի Արծ. (=Աստուած) ողորմի. Ա[ստուա]ծ իւր ողորմի: Ես՝ Յօհանէս վկայ իմ ձեռօք գրեցի»:

-16-

Նոդս դարձայ յարգ[ա]նդն հողոյ,

Դարձ[ա]յ ի ծոց մօրս իմոյ,

Յարգանդ մօրս պ[ա]հիմ յերոյ,

Նոդոյ իմոյ յերոյ յոյս գոյ»:

Կարծես բնական մեկ հարց է առաջանում: Ունե՞ն արդյոք ձեռագիր այս հիշատակագրությունները որոշակի գիտական, մշակութային արժեք: Այս հարցադրմանը մեր պատասխանը հստակ է. որքան էլ դրանք անձնական բնույթի գրություններ լինեն, հաճախ՝ կենցաղային տարրերով լի, միեւնոյն է, մի քանի առումներով հետաքրքիր են եւ հնարավորություն են տալիս նախնական եզրակացություններ անել, օրինակ՝ հայ հնագիտական գրքի տարածման արեւելի, գրքերի գնման կամ նվիրատվության հարցերի մասին, պատմական միջավայրը վերականգնելու փաստեր են պարունակում, հաճախ գրական-գեղարվեստական փորձեր, ուրանավորներ եւ

աղոթքներ են ներկայացնում, որոնք մեկ այլ տեղում հնարավոր չէ գտնել եւ այդ իմաստով եզակի նմուշներ են, եւ ի վերջո՝ այս հիշարակագրությունները հարուստ նյութ են մաքուցում մեր լեզվի կարեւոր մի շրջանի՝ վաղ աշխարհաբարի ուսումնասիրման համար:

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ